

## **Տեխնիկական առաջադրանք**

### **Խելացի ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների**

#### **նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի մշակման**

#### **1. Անվանում**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում խելացի ոռոգման համակարգի կառուցման, շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի մշակում:

#### **2. Օրագրի անվանում**

ՄԱԶԾ-ի «Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման գործընթացներում» ծրագիր:

#### **3. Օրագրի նկարագիր**

«Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման գործընթացներում» ծրագիրը (այսուհետ՝ Օրագիր) ՄԱԶԾ-ի, ԳՄՀԸ-ի և ԵԽ-ի միջև «Տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում քառամյա ռազմավարական գործընկերության շրջանակ է, որի նպատակն է մարզային և սոցիալական հավասարակշռությամբ բարելավելու Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականությունը, արդյունավետությունն ու ներառականությունը: Օրագիրն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ համագործակցությամբ և հանդիսանում է «Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում 2» ծրագրի շարունակությունը: Այն համակարգված և փոխկապակցված ծրագրային միջամտությամբ աջակցում է խոշորացված համայնքներին՝ նպաստելով վերջիններիս հետագա ժողովրդավարացմանն ու զարգացմանը: Օրագիրը կիրականացվի ՀՀ 52 խոշորացված համայնքներում:

ՄԱԶԾ-ը կողմից նախատեսվում է իրականացնել.

1. Նորարական հանրային (համայնքային) բնույթի ծառայությունների համատեղ մշակում, իրականացում քաղաքացիների հետ, ներառյալ խոցելի սոցիալական խմբերը և վերահսկողություն նրանց կողմից
2. Երիտասարդների առաջխաղացում, որպես ապագա առաջնորդներ, փոփոխություններ իրականացնողներ և տեղական ժողովրդավարության խթանողներ,
3. Շարունակելով ուժեղացնել կանանց առաջխաղացումը քաղաքական մասնակցության, տեղական ժողովրդավարության և առաջնորդության ոլորտներում

Վերոնշյալ ծրագրային բաղադրիչների շրջանակներում ՄԱԶԾ-ն նպատակ ունի աջակցել տարածքային բարեփոխումների ապակենտրոնացման փուլին և համայնքների կողմից տեղի բնակիչների, ընկերությունների և քաղաքացիական նախաձեռնությունների ոչ ֆորմալ խմբերի համար որակյալ, արդար և արդյունավետ ծառայությունների մատուցմանը, ինչպես նաև տեղական մակարդակում ավելի հզոր տնտեսական զարգացում խթանելուն: Հիմնական նպատակը տեղական մակարդակում հանրային ծառայության նախագծման և մատուցման մեջ շահառուակենտրոն մոտեցման ամրագրումն է, մասնավորապես երիտասարդների հզորացման և ներգրավվածության միջոցով: Նախաձեռնությունը կներառի խոշորացված համայնքներում ընտրված հանրային ծառայությունների հարմարեցված նորարար մոդելների նախագծում և փորձարկում (այդ թվում՝ խրախուսման սխեմաներ քաղաքացիների և հիմնական շահագրգիռ կողմերի համագործակցության համար)՝ հիմնվելով տեղական մակարդակում համայնքային ներգրավվածության և մասնակցության ուղղությամբ քաղաքացիների կողմից առաջ տարվող շահառուակենտրոն մոտեցումների ՄԱԶԾ ծավալուն փորձի վրա: Ավելին, ՄԱԶԾ-ն կմշակի և կփորձարկի ծառայությունների մատուցման և որակի համայնքային մոնիթորինգի, ինչպես նաև հանրային ծառայություններից քաղաքացիների

գոհունակության հետադարձ կապի նոր մեխանիզմներ: Այս բաղադրիչի ներքո իրականացվելիք հիմնական գործողությունները ներառում են.

1. Գնահատել թիրախային համայնքների հանրային ծառայությունների ոլորտում առկա ռեսուրսները, կարողությունները և կարիքները
2. Նախագծել ընտրված ծառայությունների մատուցման համար հարմարեցված նորարար մոդելներ, այդ թվում՝ խրախուսման սխեմաներ քաղաքացիների և հիմնական շահագրգիռ կողմերի համագործակցության համար
3. Փորձարկել համայնքային ծառայության ընտրված նորարար մոդելները, այդ թվում՝ կառավարման համակարգերի ու համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման միջոցով
4. Մշակել և փորձարկել ծառայության մատուցման և որակի համայնքային մոնիթորինգի, ինչպես նաև հանրային ծառայություններից քաղաքացիների գոհունակության հետադարձ կապի նոր մեխանիզմներ

ՄԱԶԾ-ի Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Նորարական հանրային (համայնքային) բնույթի ծառայությունների համատեղ մշակում, իրականացում քաղաքացիների հետ, ներառյալ խոցելի սոցիալական խմբերը և վերահսկողություն նրանց կողմից, մասնավորապես՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում խելացի ոռոգման համակարգի ներդրում:

**4. Աշխատանքի շրջանակը և բովանդակությունը**

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում խելացի ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի մշակում:
- Հեղինակային հսկողության իրականացում

**5. Ընդհանուր պահանջներ**

- Նախագծող կազմակերպությունը պետք է իրականացնի այցելություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնք՝ ծանոթանալու տարածքին, կատարելու համապատասխան չափումներ և հետազոտություններ:
- Նախագիծը և նրանում կատարված բոլոր տեխնիկական լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ շինարարական նորմերին և ստանդարտներին:
- Նախագիծը և նրանում կատարված բոլոր տեխնիկական լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ բնապահպանական նորմերին և հնարավորինս զերծ լինեն բնությանը վնասելուց:
- Նախագծողը պարտավոր է ապահովել առաջարկվող նախագծանախահաշվային փաստաթղթերի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերով, հաստատված համապատասխան քաղաքաշինական փորձաքննություն:
- Մինչ համապատասխան փորձաքննություն անցնելը, նախագծողը պետք է այն քննարկի և համաձայնեցնի ծրագրի ղեկավարի, փորձագետների և այլ շահագրգիռ կողմերի հետ :
- Ավարտված նախագիծը պետք է լինի ճշգրիտ, մանրամասն, ներկայացվի էլեկտրոնային և թղթային տարբերակներով:

**6. Ընդհանուր նկարագրություն**

1. Շինարարության նկարագիրը	Կառուցում
2. Ոռոգվող տարածք	180 հա
3. Կառուցվող ջրավազանի ծավալը	Մոտ 30000 մ <sup>3</sup>
4. Կառուցվող ջրավազանի մակերեսը	Մոտ 8000 մ <sup>2</sup>
5. Կառուցվող ոռոգման մայր ջրագծի մոտավոր երկարությունը	Մոտ 4000 մ

6. Վերագործարկվող պոմպակայանների թիվը	1 հատ
7. Ավտոմատացված, թվային կառավարմամբ բաշխիչ համակարգ	1 լրակազմ
8. Փոքր հիդրոէներգետիկայի կայան՝ համայնքային կառավարման կենտրոնին թվային ինտեգրման հնարավորությամբ	1 լրակազմ
9. Անհրաժեշտ կառույցների կազմը	Համաձայն կից ներկայացված հավելվածի

**7. Նախագծման ելակետային տվյալներ**

- Կառուցվող ջրամբարի կոորդինատները՝ 40°30'13.25", 45°19'29.86"
- Վերագործարկվող պոմպակայանի կոորդինատները՝ 40°30'4.30", 45°19'32.70"
- Կառուցվող շինությունների, տեղադրվող համակարգերի կազմը համաձայն՝ Հավելված 1-ի
- Ջրամբարի, պոմպակայանի տեղանքի, արբանյակային նկարները համաձայն՝ Հավելված 2-ի
- Անշարժ գույքի սեփականության վկայականի լուսապատճեն համաձայն՝ Հավելված 2-ի

**8. Նախագծման առաջադրանք**

**ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում խելացի ոռոգման համակարգի կառուցման համար նախագծերում ընդգրկել հետևյալ աշխատանքները.**

- Նախատեսել ջրամբարի նախագծում՝ համաձայն սույն նախագծային առաջադրանքին կից Հավելված 1-ի:
- Նախատեսել ցանկապատի նախագծում՝ համաձայն սույն նախագծային առաջադրանքին կից Հավելված 1-ի:
- Նախատեսել ոռոգման ջրագծի նախագծում՝ համաձայն սույն նախագծային առաջադրանքին կից Հավելված 1-ի:
- Նախատեսել պոմպակայանի նախագծում՝ համաձայն սույն նախագծային առաջադրանքին կից Հավելված 1-ի:
- Նախատեսել ավտոմատ բաշխիչ ցանցի և դրա թվային կառավարման համար անհրաժեշտ համակարգի նախագծում՝ համաձայն սույն նախագծային առաջադրանքին կից Հավելված 1-ի:
- Նախատեսել փոքր հիդրոէներգետիկայի կայան՝ համայնքային կառավարման կենտրոնին թվային ինտեգրման հնարավորությամբ, նկարագիրը՝ ըստ Հավելված 1-ի
- Կառույցների, տեղադրվող համակարգերի ճարտարապետաշինարարական, կոնստրուկտորական, ինչպես նաև ինժեներական ներքին ցանցերի աշխատանքային գծագրերի մշակում
- Նախատեսվող շինարարական աշխատանքների համար տեխնիկական մասնագրերի պատրաստում, որտեղ պետք է ներառվեն շինարարության համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Նախատեսել անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ցուցանակներ:
- Նախատեսել ջրամբարի մերձակա տարածքի Բարեկարգում՝ իրականացնելով հարթեցման աշխատանքներ և մակերեսային ջրերի հեռացման միջոցառումներ:

**9. Նախագծի կազմը**

- Ճարտարապետական, կոնստրուկտորական և ինժեներական մասեր, շինարարության կազմակերպման նախագիծ, գլխավոր հատակագիծ, տարածքի բարեկարգման գծագիր, բացատրազրեք յուրաքանչյուր մասի համար, մասնագրեր, հատակագծեր, կտրվածքներ, պրոֆիլներ, հանգույցներ, սարքավորումների, կահավորման մանրամասն գծագրեր,

սարքավորումների տեղադրման հատակագծեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ, այդ թվում ծավալաթերթի տեսքով նախահաշիվ և աշխատանքների իրականացման ժամանակացույց: Ինչպես նաև ճարտարապետական մասում ներառել եռաչափ մոդելավորված գունապատկերներ:

- Իրականացնել երկրաբանական հետազոտություն և գեոդեզիական հանույթ:
- Նախագիծը և նախահաշիվը ներկայացնել՝ ՀՀ սահմանված կարգերով համապատասխան քաղաքաշինական փորձաքննության:
- Նախագիծը համաձայնեցնել ՀՀ ԱԻՆ և բոլոր այլ շահագրգիռ կողմերի հետ:
- Նախագիծը և նախագծի կազմը իրականացնել համաձայն ՀՀ-ում գործող քաղաքաշինական նորմատիվ իրավական ակտերի:

#### **10. Այլ պահանջներ**

- Նախագիծը ներկայացնել 6 օրինակից հայերեն լեզվով, թղթային և էլեկտրոնային PDF, DWG կամ PLN տարբերակներով:
- Նախահաշիվը ներկայացնել 2 թղթային օրինակից հայերեն լեզվով, միաժամանակ ծավալաթերթ՝ էլեկտրոնային Excel տարբերակով:
- Ներկայացնել շինարարական աշխատանքներին, նյութերին և սարքավորումներին ներկայացվող երաշխիքային ժամկետների պահանջները (առավելությունը պետք է տալ ՀՀ տարածքում սպասարկման ծառայություն մատուցողներին):
- Ներկայացնել շինարարական մրցույթին անհրաժեշտ որակավորման չափանիշները (աշխատուժ, լիցենզիա, մեք. մեխանիզմ):
- Յուրաքանչյուր նախագծվող միավոր ներկայացնել առանձին թղթային օրինակից, ներառյալ յուրաքանչյուր միավորի նախահաշիվը:
- Նախագծման առաջադրանքին կցվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

#### **11. Ինստիտուցիոնալ կարգավորումներ**

- Կատարողը պետք է անմիջականորեն աշխատի և ուղղակիորեն հաշվետու լինի Ծրագրի ղեկավարին, ինչպես նաև պետք է աշխատի ՄԱԶՕ «Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման գործընթացներում» ծրագրի թիմի հետ սերտ համագործակցությամբ:
- Կատարողը պետք է ներկայացնի ՄԱԶՕ-ին ավարտական հաշվետվություն:

#### **12. Նախագծանախահաշիվային աշխատանքի տևողություն**

30 աշխատանքային օր:

#### **13. Նախագծանախահաշիվային աշխատանքների փուլեր**

1. Էսքիզային նախագծի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ: Ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճարտարապետահատակագծային առաջադրանքի և համապատասխան տեխնիկական պայմանների ձեռք բերում՝ ՄԱԶՕ փորձագետների հետ սերտ համագործակցությամբ:
2. Կառույցների ավարտական աշխատանքային գծագրերի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ:
3. Նախագծանախահաշիվային փաստաթղթերի փաթեթի համապատասխան քաղաքաշինական փորձաքննություն և հաստատում բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական համապատասխան մարմինների հետ՝ ձեռք բերելով շինարարության թույլտվություն:

**Նախագծանախահաշիվային աշխատանքները ըստ նախագծվող միավորների պետք է հանձնել մեկ փուլով՝ ըստ Հավելված 1-ում նշված բոլոր միավորների:**

**14. Աշխատանքի վայր**

Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք

**15. Կատարողի որակավորում**

- Որոգման / հիդրոտեխնիկական աշխատանքների նախագծման առնվազն 5տարվա փորձ
- Առնվազն 2 նմանատիպ բարդության նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման փորձ վերջին 5 տարիների ընթացքում
- «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննությունների եզրակացությունների տրամադրման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է, որ մասնակիցն ունենա Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում՝

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք)	
Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում	
<b>Լիցենզիա և լիցենզիայի ներդիր</b>	
(նույն լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)	
1.	<b>Հիդրոտեխնիկական օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հիդրոտեխնիկական կառույցներ և համակարգեր</b>

**16. Աշխատակազմ**

ա) Պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.

Հ/Հ	Մասնագիտական որակավորում/հաստիք	Պահանջվող կրթությունը	Ըստ մասնագիտության նվազագույն աշխատանքային ստաժը, տարի	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
<b>Պատասխանատու անձանց մատով պահանջվող մասնագետներ</b>				
1	Ծրագրի ղեկավար/1	բարձրագույն, (մագիստրոս, կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	հիդրոտեխնիկական ոլորտում մատուցված ծառայություններ
2	Ինժեներ – հիդրոտեխնիկ-նախագծող / 2	բարձրագույն, (մագիստրոս, բակալավր կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	հիդրոտեխնիկական ոլորտում մատուցված ծառայություններ
3	Ինժեներ – հիդրոլոգ / 1	բարձրագույն, (մագիստրոս, բակալավր կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	Որակավորմանը համապատասխան ոլորտի հաշվարկների, նախագծային աշխատանքների մատուցված ծառայություն
4	Ինժեներ-էլեկտրիկ / 1	բարձրագույն, (մագիստրոս, բակալավր կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	Որակավորմանը համապատասխան ոլորտի հաշվարկների, նախագծային աշխատանքների մատուցված ծառայություն
5	Ինժեներ – կոնստրուկտոր/1	բարձրագույն, (մագիստրոս, բակալավր կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	Որակավորմանը համապատասխան ոլորտի հաշվարկների, նախագծային աշխատանքների

				մատուցված ծառայություն
6	Ինժեներ-թվային ցանցեր / 1	բարձրագույն, (մագիստրոս, բակալավր կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	Որակավորմանը համապատասխան ոլորտի հաշվարկների, նախագծային աշխատանքների մատուցված ծառայություն
7	Ոռոգման կառուցվածքների/ջրային համակարգերի շահագործման մասնագետ / 1	բարձրագույն, (մագիստրոս, բակալավր կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	Որակավորմանը համապատասխան ոլորտի հաշվարկների, նախագծային աշխատանքների մատուցված ծառայություն
8	Երկրաբան և/կամ հիդրոերկրաբան / 1	բարձրագույն, (մագիստրոս, բակալավր կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	Որակավորմանը համապատասխան ոլորտի հաշվարկների, նախագծային աշխատանքների մատուցված ծառայություն
9	Նախահաշիվ, տեխնիկական մասնագրերի ինժինեեր / 1	բարձրագույն, (մագիստրոս, բակալավր կամ դիպլ. ինժեներ)	առնվազն 5 տարի	Որակավորմանը համապատասխան ոլորտի հաշվարկների, նախագծային աշխատանքների մատուցված ծառայություն
10	Հետախուզական աշխատանքներ իրականացնող / 2	Մասնագիտական կրթություն	առնվազն 5 տարի	Որակավորմանը համապատասխան ոլորտի հաշվարկների, նախագծային աշխատանքների մատուցված ծառայություն

**բ) մասնագետները պետք է ունենան.**

- ծրագրի իրականացման գոտում նման բնակլիմայական պայմաններում նախագծման և ծրագրի կառավարման փորձ
- պլանավորման և նախագծման գործառնություններին աջակցման, ծրագրի կառավարման, ծրագրի կառավարմանը աջակցության, ինժեներության, ծառայությունների իրականացման փորձ
- ֆինանսական, հաշվապահական և վճարման ոլորտների Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների լավ իմացություն
- Միջազգային դոնոր/ֆինանսական հաստատությունների ֆինանսավորմամբ իրականացված նմանատիպ աշխատանքներում ներգրավվածություն և այդ հաստատությունների գործառնական քաղաքականությունների լավ իմացություն և կիրառման փորձ:

**17. Վճարման պայմաններ**

Վճարումն իրականացվելու է երկու փուլով՝

- Առաջին մաս (90%) -համապատասխան առաջադրանքը ժամանակին ավարտելուց, ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա:
- Երկրորդ մաս (10%) – շինարարության ավարտից և փորձարկման աշխատանքներից հետո ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

Խելացի ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի մշակում

Հ/հ	Կառույցների անվանումը	Կառույցների Քանակը	Մոտավոր մակերեսը ք/մ	Ծանոթություն
1.	Ջրամբար	1	8000	Նախատեսվում է կառուցել 30000մ <sup>3</sup> ծավալով, գեոմեմբրանային ծածկույթով ջրավազան, որի օգտակար ծավալը չի կարող լինել պակաս քան 25000 մ <sup>3</sup> : Գեոմեմբրանի տակ պետք է լինի քարերից գերծ, նախապատրաստական շերտ: Անհրաժեշտության դեպքում նախատեսել գեոտեքստիլ: Պետք է նախատեսել ջրավազանի սնման, գերլցման, մատուցման և դատարկման խողովակների տեղադրում: Ջրավազանը ունի սնման երկու աղբյուր՝ 1. Խորքային պոմպից մղվող ջուր 2.Սարերից իջնող, ինքնահոս ջրեր՝ 2-3 լ/վ: Սարերից իջնող ջրերի համար, պետք է նախատեսել պարզարանի կառուցում: Պետք է նախատեսել ավելցուկային ջրերի և ջրավազանի հարակից տարածքի մակերևույթային ջրերի ուղղորդումը դեպի գոյություն ունեցող հեղեղատարներ: Մատուցման խողովակաշարը պետք է միանա հարակից գյուղատնտեսական հողատարածքների ոռոգման խողովակաշարին: Անհրաժեշտության դեպքում, պետք է նախատեսել պարզարան: Ջրավազանը պետք է կահավորված լինի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ կահավորանքով: Ջրավազանի հարակից հատվածները պետք է բարեկարգվեն՝ հարթեցման միջոցով:
2.	Ցանկապատ	1	600	Ցանկապատը պետք է տեղակայված լինի ջրավազանի պարագծով՝ երկու կողմից մուտքի հնարավորությամբ: Մուտքերի վրա պետք է նախատեսել դարպասներ՝ փականային համակարգով: Ցանկապատի ցանցը պետք է նախատեսել ցինկապատ մետաղով:
3.	Պոմպակայան	1	25	Նախատեսվում է վերագործարկել համայնքի տարածքում առկա խորքային ջրերի հորը: Պետք է կատարվեն հիդրավլիկ հաշվարկներ, որոշվի անհրաժեշտ պոմպի բնութագիրը: Պոմպի ընտրության հարցում առաջնային է էներգաարդյունավետությունը:
4.	Ոռոգման ջրագիծ	1	3600	Ոռոգման ջրագծի երկարությունը մոտ 4000 մ է, պետք է կատարել հստակ հաշվարկներ՝ խողովակաշարի տրամաչափի, ճնշման որոշման համար: Ջրի բաց թողումը դեպի գյուղատնտեսական նշանակության հողամասեր, պետք է իրականացվի ավտոմատ, թվային կառավարվող համակարգի միջոցով՝ թվային տվյալների և էլեկտրոնիկայովների հաղորդման միջոցով: Համակարգը պետք է ներառի ջրաչափական տվյալների փոխանցման բաղադրիչ:

5.	Հիդրոոդերևութաբանական կայան	1	4	<p>Կայանը պետք է ծառայի որպես արագ ազդարարման համար հենքային տվյալների ապահովող: Պահանջվող տվյալները(անձրև, հողի խոնավություն և այլն), տվիչների միջոցով, պետք է թվային տվյալները հաղորդեն կառավարման կետերին: Կառավարման կետերն իր հերթին, պետք է ազդարարի դրանց մասին ֆերմերային տնտեսություններին՝ հաղորդագրությունների տեսքով:</p>
----	-----------------------------	---	---	---





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 21 ապրիլի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՇՈՂԱԿԱԹ ՀԱՄԱՅՆՔ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Գեղարքունիք, համայնք Շողակաթ գյուղ Շողակաթ հողամաս

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Համայնքի ղեկավարի 13/04/2022թ. թիվ 70-Ա որոշում

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 05-074-0207-0008

Մակերեսի չափը (հա)՝ 0.40717

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող, Այլ հողատեսք

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 21042022-05-0021, գաղտնաբառ՝ RSAUE43SZMYV

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

0,40717 հա մակերեսով հողամասից 0,38249 հա հանդիսանում է վարելահող, իսկ 0,02468 հա՝ այլ հողատեսք:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԼՈՒՍԻՆԵ ԱՍԼԱՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 21042022-05-0021, գաղտնաբառ՝ RSAUE43SZMYV

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով



05-074-0106-0074

05-074-0106

05-074-0106-0101

05-074-0207-0003

05-074-0106-0120

05-074-0207-0006

05-074-0207

05-074-0207-0006

05-018-0101-0025

05-018-0101-0003

05-018-0101-0011

05-074-0106-0002

05-074-0108

05-074-0208-0001

05-074-071-000003



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 10 մայիսի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՇՈՂԱԿԱԹ ՀԱՄԱՅՆՔ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Գեղարքունիք, համայնք Շողակաթ գյուղ Շողակաթ հողամաս

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

ՀՀ կառավարության որոշում 29.07.2004թ. N 1128-Ն

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 05-074-0106-0120

Մակերեսի չափը (հա)՝ 0.59282

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող, Այլ հողատեսք

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 10052022-05-0034, գաղտնաբառ՝ INZAFTU8N7QW

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարելահող՝ 0.35615հա, այլ հողատեսք՝ 0.23667հա:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 10052022-05-0034, գաղտնաբառ՝ INZAFTU8N7QW

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով





Ջրավազան 30000 մ.կս.

M14

Խորքային հոր 20 լ/վ

Image © 2022 Maxar Technologies

